



ՄԱՍՆԱԻՈՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՅ ՍԵՐԱՍԻՍԻՈՑ

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յսղագ Տեսչութեան Գրիգոր Արքեպիսկոպոսի Գաղասացոյ եւ վասն անցիցն որ յաւուրս նորա 'ի Սեբասիա:

Իբրեւ հրաժարեցաւ յառաջնորդութենէ վիճակիս Յակոբ Արքեպոս. և բազմակի՛ք գիր քաղաքացւոց հնաւ առ Զաքարիա Պատրիարքն 'ի Կ. Պոլիս, անդ էր և Գրիգոր Արքեպոս. Օրազատացի՛ որ եկեալ էր յԵրուսաղէմէ իբր հրաւիրակ ուխտաւորաց: Եւ զի ընդ այն ժամանակս առեալ էին Գաղիացիք զԵգիպտոս 'ի ձեռաց Օսմանեանց, էր տաստիկ պատերազմ 'ի մէջ նոցա և ճանապարհ ծովու և ցամաքի աւերեալ յասպատակաւոր զօրաց և հինից, վասնորոյ ոչ կարաց դառնալ յԵրուսաղէմ, այլ մնաց անդ 'ի Պոլիս, և մինչ Սերաստացիք խնդրէին զայր ոք հարստան, զսա ընտրեալ Զաքարիա Պատրիարք, կտրեցաք Տեսուչ նահանգին Սերաստիոյ, Արքայական հրավարակաւ և Պատրիարքական կոնդակաւ, զորս առեալ ել 'ի ճանապարհ և եկն հնաւ 'ի վիճակն Սերաստիոյ 'ի չքնաղ վանս Սրբոյ Նշանի 'ի 12 փետրուարի յաւուր շարաթի (ՌՄՈԸ = 1799): Յաջորդումին ձեռն էարկ և սպիտակացոյց գեկեղեցի Ս. Աճածնին որ 'ի Ս. Միհաստանիս, և զանազան նկարիք գեղարարեալ պայծառացոյց: զխաչկալն նորոգ շինեաց և ոսկեգօծեալ շքեղացոյց: 'ի սօին ժամանակի հնաս լաղճան կնիաց Տեսուչ Ղուկասու Սրբազան կաթողիկոսին և հաճութեամբ Ազգիս ընտրեցաւ 'ի տեղի նորին Դանիէլ Արքեպոս., որ էր Պատրիարք Երեմի 'ի Կ. Պոլիս, զոր յետ բազմադիմի վրդովմանց և խռովութեանց և աքսորականաց նորին յեւդոնկիա, կրկին հրաւիրակս առաքեալ յէջմիածնէ կոչեցին զնա 'ի կաթողիկոսութիւն, վասն որոյ

յուղի անկեալ եկն հնաւ 'ի քաղաքս Սերաստիա՝ 'ի հրաշակեալ վանս Ս. Նշանի և կացեալ անդ զառուրս երիս, ուղեորեցաւ ընդ նմա և Գրիգոր Արքեպոս. մինչև ժինկա և անտի զարձաւ 'ի վանս իւր, և Դանիէլ Արքեպոս.՝ ընտրեալն 'ի կաթողիկոսութեան հասեալ 'ի Պայազիտ լուաւ եթէ Դաւիթ եպոս. Թիֆլիզցի օծեալ և նստեալ է կաթողիկոս 'ի Ս. էջմիածին, վասն որոյ գնացեալ նստաւ յԵրեք-Պորան կոչեցեալ մենաստանի և անտի գրեալ ծանոյց ազգիս մերոյ զամենայն հանգամանս զայստօրի, 'ի ժամանակիս այսմիկ (ՌՄՄԱ = 1802) Սերաստացի Ալէստին Բղէշին եկն իշխանութեամբ 'ի քաղաքս և ապան զՊաւլոս կոչեցեալ նոն և ըզ-Տէլի Համզան՝ որք հարստաւորիչք էին ազգիս: Յայսմ ամի՛ յերրորդի առուր փետրուարի ընկալաւ զիշխանութիւն քաղաքին Հիւսէշին Բղէշին Ֆրաի կոչեցեալ և զի 'ի վաղուց հետէ 'ի հեռուստ անտի հռչակեալ էր համբաւն անգութ և մարդախոշոշ բարուց նորին, վասնորոյ միաբանեալ քաղաքացւոցն զինեցան ընդ գէմ նորա շայք և այլազգիք և ո'չ թողին նմա մտանել 'ի քաղաքն և մինչդեռ պատաղէր առնուլ զքաղաքն՝ 'ի դիմաց ամենեցուն գանդատանք հասանէին յունկն Արքայի՛ յորմէ ցատուցեալ Արքային՝ հրաման եհան հատանել զգլուխ նորա, վասն որոյ զօրք բազումք ժողովեալ պաշարեցին զնա 'ի իման գիւղն և յետ իբրեւ երկուց ամսոց հատին զգլուխ նորա 'ի 12 ապրիլի, և 'ի բազմավրդով ժամանակիս յանթիւ զօրաց գումարեկոց՝ յուղով վիշտս և տառապանս կրեցին քաղաքացիք և գիւղականք՝ մոնաւանդ Ս. Միհաստանս և Գրիգոր Արքեպոս., զի իբրեւ 50 հսկելաւոր հրամանաւ Քաղաքացիներն եկեալ նստան 'ի Ս. Վանս, առ 'ի պաշտպանել զսա 'ի թշնամեաց, զորոյ զպիտոյսն և

զերիվորացի՝ հոգալար Դէտն իբրեւ ամիսս երիւս։ Մինչ չեւ եւ էր ոգի առեալ Գրիգոր Արքեպս. ի ի յոգնադիմի վշտակորութեանց աստի, ժամանեալ հասին առ նա բազում գրութիւնք աստի եւ անտի ի Դանիէլ ընտրեալ կաթողիկոսէ, ի Պատրիարքէն կ. Պոլսոյ եւ ի Փիլիպպոս եւ Գաապար ամիրայից, որք էին հաաավաճառք միականի Եղեալֆ փոխարքային, եւ էին յայնմամ երեւելի ի մէջ ազգիս եւ խորխա յոյժ, եւ յայլոց բազմաց, որք հարկադրէին զնա զնալ յերեք-նորան կոչեցեալ մենասաաան ի հանդէս օծութեան Դանիէլ կաթողիկոսի։ Ընկալեալ Գրիգոր Արքեպս. ի զայսոսիկ գրութիւնս, ալտալոյ կամօք եւ ի Սերաստիոյ ի 27 ապրիլի եւ զնաոյ աւգր, յոր ժողովեալ բազմութիւն Եպիսկոպոսաց եւ այլոց փառանգաւորոց Եկեղեցւոյ, օծին զԴանիէլ Արքեպս. ի կաթողիկոս։ Եւ զի Գրիգոր Արքեպս. այս էր այր պերճախօս եւ ծաւնօթ մեծամեծաց կ. Պոլսոյ, վասն որոյ Դանիէլ կաթողիկոս յանձնեալ նմա ըզկոնդակս անդրանիկ օրհնութեանցն եւ զյաաուկ գրեանս առ ալ եւ ալ անձինս ի մեծն Պոլիս եւ յամենայն քաղաքօ, զորս ընկալեալ եւ ի ճանապարհ եւ զնացեալ հնաա ի կ. Պոլիս եւ ընդունելի եղեւ մեծաւ պաաուով եւ սիրով ի Գրիգոր Պատրիարքէն եւ ի կուսակցացն Դանիէլ կաթողիկոսի՝ որք եւ ուղերձ եւ պարզեաարտին նմա Արքայական հրամանաւ եւ Պատրիարքական կոնդակաւ զԱռաջնորդութիւն վրեակին Գաղատիոյ։ Եւ ապա Գրիգոր Արքեպս. Սերաստիոյ եւ իբրեւ Դեա Գաղատիոյ եւ, սկսաւ ընթեաուել յեկեղեցիս զկոնդակ օրհնութեան Դանիէլ կաթողիկոսի եւ յիշաաակել տալ զանունն ի Ս. Պատարագին։ Եւ եղեւ իբրեւ զնաոյ ի Ղաւթիա յեկեղեցի Ս. Լուսաաորչին, արք ռմանք խորհրդեամբ կուսակցացն Դաւթ կաթողիկոսի՝ պատառեցին զանդաան Դանիէլի վասն որոյ վրդովումն մեծ եւ խաղալութիւն սաաաիկ անկաւ՝ ի մէջ ազգիս ի կ. Պոլիս, եւ յառ աւաւրց ինչ աքաորեցին զԳրիգոր Պատրիարքն ի Ս. Էջմիածին առ Դաւթ կաթողիկոսի եւ եղին ի տեղի նորին ի մեծն Պոլիս ըզԹովհաննէս Արքեպս. ի, որ երկու ամա

յաաաջ նաաեալ եւ էր Պատրիարք եւ ապա աքաորեալ յԵղեղիկա, եւ մինչ չեւ եւ էր եկեալ նա յԵղեղիկոյ՝ եղին ի Տեղապառ զԱնդրէոս Եպս. ի Դեա Գաղատիոյ, եւ զի աաեղութիւն ունէր առ Գրիգոր Արքեպս. ին Սերաստիոյ, հնաա հրաման Արքեղեական եւ ետ աքաորել զնա եւ նա անցեալ նաաա յիւսկիւաաար, եւ վաճառեալ զբազում ինչս՝ ձեռնաառութեամբ ումանց զերծաւ յաքաորանաց եւ ապա դարձաարաաեալ եկն յաաաջին վրեակ իւր ի Սերաստիա ի 11 մարտի։ Եւ մինչդեռ Գրիգոր Արքեպս. կալր ի կ. Պոլիս, եկն ի Սերաստիա՝ փոխարքայ միականի Եղեալֆ Բէէէին եւ սեղանաւոր նմին Փիլիպպոս Ամիրայ, զոր բարեպաաան փամ համարեալ իշխանք քաղաքիս, զնացեալ մաաուցին աղերս՝ առ ի հանել զհրաման Արքեղեական վասն նորոգութեան Ս. Աճառին Եկեղեցւոյ եւ նա յանձն էառ եւ խոսաացաւ կաաարել զխնդիր նոցին։ վասն որոյ միարանեալ քանանայից, իշխանաց եւ ժողովորդեան քաղաքիս, ուխտս եւ դաւչինս եղին եւ զրեալ սաորաբերեցին զի ի կեանս եւ ի մահ ի միաաին լիցին, եւ ապա առեալ վճադիր ի դաաաաւորէն յղեցին ի մեծն Պոլիս ընդ Տէմիրճեան Պ. Գրիգորին եւ Տ. Պապեան Ս. Կարապետին, ընդ որս եւ յուլով բազմակնիք դրութիւնս աղերսանաց առ ալեւալ աւձինս, եւ ինքեանք աառ սկսան պաաորաաեալ զամենայն պիտոյս շինութեան՝ զգերան, զքար եւ զկիր եւ, եւ քակեալ հարթաաաաակ արաւրին զընակութիւնս Եկեղեցւոյն՝ որք էին ի շրջապաաի նորս եւ վարձու առեալք ռմանց, եւ ալապէս յարգարեալ կազմ եւ պաաորաառ սպասէին դարձի թղթաաաաացն։ Իսկ նոքս զնացեալ աղղր միացին իբր ամիս ութ կամ տասն եւ չհղե օգուտ ինչ ի Փիլիպպոս Ամիրայ, եւ ոչ յայլոց, վասն որոյ դեգերեալ յայսր եւ յանդր եւ ծախսեալ յուլով դրամս՝ իբր 35 քաակ՝ ձեաամբ Ռէյիլ Ղալիպ Էֆէնտիի հանին յԱրքեղեաուա զՀրամանագիր եւ ընկալեալ դարձան փութեակին ի Սերաստիա։ Յայնժամ ժողովուրդ իշխանաց հանդերձ Ռաշնարաւան ի վաճառ հանին քաղաք մինչ ի դրունս մեծամեծացն ալապգեաց եւ նօքօք հաճեցուցեալ զՏիվրիկցի Բէէէին

առին հրաման և 'ի 25 յունիսի (ՌՄԾԲ = 1803) սկսած 'ի շինութիւն և 'ի հիմանց անտի նորոգ կերտեալ կանգնեցին հասարակին և ամբակուս պարսպաւ, եթնեակ չքնաղ խորանու, երկեակ սրբատամբ և աւանդատմբ, հնդեակ դրամբ, 24 լուսամտաք, և Առաջնորդարան պատշաճաւոր սենեկաք են: Եւ յաւարա շինուածոյն՝ յաւուր Տօնի վերացման Ս. Խաչին 'ի 13 սեպտեմբերի արարեալ մեծանդէն նաւահատին զհնամբ խոյոց և զուսանաց և Առաջնորդ Գրիգոր Արքեպս. չքեղափայլ հանդիսիւ և երեկիլ փառաւորութեամբ մոտուցեալ զԱձոյին պատարագն օրհնեաց զԵկեղեցին և էօծ ինքն իսկ զԱւագ Խորանն որ յանուն ամէնօրհնեալ Ս. Աձածնին էր կառուցեալ և եղև կառուցեալ, և յաջիւ սեղանն որ յանուն Սրբայն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ օծանել Յովնանէս վարդապետին և զայլոն ամենայն ըստ իւրաքանչիւր կարգին օրհնեալ կատարեաց զանգամանս օծութեան և օրհնեաց զիշխանսն և զժողովուրդն և վճարեալ զանդէսն արծակեաց զնստա: Զմանէ արտա ասանաւոր ինչ գեղեցիկ Յովնանէս վարդապետ Սեբաստացի՝ յորում կարգաւ պատմէ զանգամանս շինութեան և զատարարութեան 'ի խորհրդական միտա այլաբանէ: 'ի ամին ժամանակի (ՌՄԾԳ = 1804) եկն իշխանութեամբ 'ի քաղաքս 'ի 10 յունվարի Ապումիս Մուհամմէտ Բէէչին, այր գամանաւս և գաւաւնարայ, որ եւ յալով շեղութիւնս աղգիս և խահրեաց զընդ որ վիճակայինս ժանրարեան և անհանդուրժելի հարկս 'ի վերայ զնելով և բաց 'ի բազմադիմի հարկապահանջութեանցն էառ տասն և վեց քսակ դրամ տուգանս 'ի Ս. Եկեղեցւոյ և տասն և հինգ քսակ 'ի քաւանայից, վասն որոյ բազմացաւ պարտքն և մինչ նա այսպիսի անգութ և անողորմ բարւաք առաւպեցուցանէր զքաղաքս, յաճախեցին վասն նորա գանգատաւորք 'ի Մեծն Պալիս, վասն որոյ եկն հրաման յԱրքայէ

յեւ իբրև երկուց ամաց և աքսորեցին զնա յԵդնիկիս (ՌՄԾԵ = 1806), Յեւ այսորիկ տեսեալ Գրիգոր Արքեպս.՝ եթէ պարաք Ս. Վանուց և Ս. Եկեղեցւոյ խառնեալ ընդ յիւրարոս կացուցին զգաւմար մեծ հանդերձ տոկոսիւքն, որաբ ժողով մեծ յեկեղեցւոյ Ս. Աձածնին և առաջի արար նոցա զյալովութիւն պարտուցն և յորդորեաց զնստա դարման դեղայ մատուցանել այնմ, որք յեւ բողոքմ խորհրդոց՝ յայա արարին զի միւս անգամ ժողովեացին աղբմութիւնս, վասն որոյ գործադիր և նպատաւաւաք կացուցին զՍեբաստացի Յովնանէս վարդապետն որ և յաւուր չարաթու 'ի տօնի եթանասուն և երկու աշակերտացն Գ. ի 'ի 6 հոկտեմբերի սկսաւ 'ի գործ և հաւաքեաց տասն և չորս քսակ դրամս և յաւուր վարդապետի Կիւրակէին 'ի 21 յուլիսի (ՌՄԾԶ = 1807) մատուցեալ զԱձոյին Պատարարութիւն յԵկեղեցւոյ Ս. Աձածնին, այն ինչ կամէր զնալ և յեկեղեցի Ս. Սարգսի յանկարծակի եկն եհաս 'ի Կ. Պոլսոյ արքայական հրամանագիր Պատրիարքական Կոնդակաւ առ Գրիգոր Արքեպս.՝ յԱռաջնորդութիւն վիճակին Գաղատիոյ, վասն որոյ մնաց նպատան Ս. Սարգիս Եկեղեցւոյ: Եւ ապա Գրիգոր Արքեպս. պատրաստեցաւ գնալ 'ի Գաղատիս և ժողովեալ քանանայից, իշխանաց և գլխաւորաց համարուեստիցն (էսնաֆ) տեսին ընդ նմա զհաշիւ Ս. Վանուց և Ս. Եկեղեցւոյ և գտին 66 քսակ դրամ պարտո, որ 'ի ձեռն իւր գրեալ 'ի Տօմարի և կնքեալ եւ 'ի ձեռն նոցա և ինքն յալղի անկեալ 'ի 1 օգոստոսի զնաց յեկիւրին իւր 'ի Գաղատիս՝ արէ էնկիւրի, և յեւ իբրև երկից ամաց ել յայց 'ի վիճակ իւր և մինչ զնացեալ եհաս 'ի Սպարտա անդ ժամանեալ վաղճան կենացն փոխեցաւ առ Քրիստոս և թաղեցաւ 'ի գերեզմանատան անդ 'ի Սպարտա՝ Լակեզիմոն կամ 'ի Միսիսթրոս քաղաքի յօթն գեկտեմբերի ՌՄԾԸ = 1809:

ՏԻԳՐԱՆ Ս. ԳԻՐԻՇԵԱՆ

(Շարունակելի՝ 12)